Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան 12.11.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը,
(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)
հետևյալ կազմով.
նախագահությամբ՝ իրավ. գիտ. թեկնածու Կարեն Հակոբյանի
մասնակցությամբ անդամներ՝ դատավոր Դանիել Դանիելյանի
դատավոր Աննա Դիլբարյանի,

քննարկելով վարչական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ հավակնորդի կողմից բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Հավակնորդը բողոքարկել է վարչական իրավունք բաժնի 9-րդ, 10-րդ, 12-րդ, 16-րդ, 34-րդ, 41-րդ հարցերը:

Հավակնորդի բողոքի հիմքերի և հիմնավորումների շրջանակում քննարկելով բողոքը՝ Հանձնաժողովը արձանագրում է հետևյալը.

<u>Վարչական իրավունքի բաժին</u>

Հարց 9-րդ

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից 3) տարբերակը, այն է՝ *օրինականության, ձևական պահանջները չարաշահելու արգելքի, հայեցողական լիազորությունները սահմանափակելու, կամայականության արգելքի, առավելագույնի, վարչարարության համաչափության, հավաստիության կանխավարկածի, տնտեսավարության սկզբունքները,* մինչդեռ՝ ներկայացվածներից ճիշտ տարբերակը 2)-ն է, այն է՝ *օրինականության, ձևական պահանջները չարաշահելու արգելքի, հայեցողական լիազորությունները սահմանափակելու, կամայականության արգելքի, առավելագույնի, վարչարարության համաչափության, հավաստիության կանխավարկածի, տնտեսավարության սկզբունքները և այլ սկզբունքները:*

Հավակնորդի փաստարկներն ըստ էության հանգում են նրան, որ քննարկվող հարցի ճիշտ պատասխան կարող համարվել այն պատասխանը, որը սպառիչ է, վերջացնող և ավարտուն, հետևաբար, այս համատեքստում քննարկելով ուղենիշով տրված պատասխանի սպառիչ և ավարտուն լինելու հանգամանքը, այն ինքնին սպառիչ չէ, քանզի սպառիչ կերպով չի

թվարկում վարչարարության սկզբունքները, այլ պարունակում է նշում այն մասին, որ առկա են այլ սկզբունքներ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ 9-րդ հարցը ձևակերպված է հետևյալ կերպ. «Վարչարարության սկզբունքներն են /նշել սպառիչ պատասխանը/»:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ գլխի 4-11-րդ հոդվածներով սահմանված են վարչարարության հետևյալ սկզբունքները՝ օրինականության, ձևական պահանջները չարաշահելու արգելքի, հայեցողական լիազորությունները սահմանափակելու, կամայականության արգելքի, առավելագույնի, վարչարարության համաչափության, հավասարության կանխավարկածի, տնտեսավարության, իսկ նույն գլխի 12-րդ հոդվածը սահմանել է նաև այլ սկզբունքներ կիրառելը, որի համաձայն՝ նույն գլխով սահմանված վարչարարության հիմնարար սկզբունքներն սպառիչ չեն և չեն կարող արգելք լինել վարչարարության այլ սկզբունքներ կիրառելու համար:

Վերոգրյալից հետևում է, որ որպես սպառիչ պատասխան պետք է համարել 2)-րդ տարբերակը, քանի որ Հավակնորդի կողմից նշված տարբերակով կստացվի, որ բացի նշված սկզբունքներից, այլ սկզբունքներ չեն կարող կիրառվել:

Այսպիսով, Հանձնաժողովը գտնում է, որ հարց 9-ի վերաբերյալ Հավակնորդի նշած տարբերակը չի կարող համարվել ճիշտ պատասխան:

Հարց 10-րդ

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան նշել է առաջադրվածներից 3) տարբերակը, այն է՝ *հարուցման, ընթացիկ և եզրափակիչ փուլերից, իսկ անմիջական սպառնացող վտանգը կանխելու կամ արդեն իսկ առաջացած վտանգի հետևանքները վերացնելու, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում վարչական վարույթը կարող է սահմանափակվել միայն հարուցման և եզրափակիչ փուլերով*, մինչդեռ՝ ուղենիշային տարբերակում ճիշտ տարբերակն է 2)-ը, այն է՝ *հարուցման, ընթացիկ և եզրափակիչ փուլերից, իսկ անմիջական սպառնացող վտանգը կանխելու կամ արդեն իսկ առաջացած վտանգի հետևանքները վերացնելու, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում վարչական վարույթը կարող է սահմանափակվել միայն եզրափակիչ փուլով:*

Հավակնորդը նշել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասը վերաբերում է վարչական վարույթի ընթացիկ փուլի բացառմանը և ոչ թե հարուցման փուլի բացառմանը: Օրենսդրությունը չի նախատեսում դրույթ այն մասին, որ եթե գործում է միայն եզրափակիչ փուլով վարույթի ավարտի կարգը, ապա այն չի համարվում հարուցված:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անմիջական սպառնացող վտանգը կանխելու կամ արդեն իսկ առաջացած վտանգի հետևանքները վերացնելու, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում վարչական վարույթը կարող է սահմանափակվել **միայն եզրափակիչ փուլով:**

Վերոգրյալ հոդվածը ելնում է այն տրամաբանությունից, որ այն իրավիճակներում, երբ վարչական մարմնից պահանջվում է անհապաղ գործելու անհրաժեշտություն, վերջինս միանգամից կարող է ընդունել վարչական ակտ, այսինքն՝ վարչական վարույթը տվյալ դեպքում բաղկացած է միայն եզրափակիչ փուլից:

Այսպիսով, Հանձնաժողովը գտնում է, որ հարց 10-ի վերաբերյալ Հավակնորդի նշած տարբերակը չի կարող համարվել ճիշտ պատասխան:

Հարց 12-րդ

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից 4) տարբերակը, այն է՝ *անհրաժեշտություն է առաջանում անհապաղ ընդունելու վարչական ակտ, քանի որ հապաղումը կարող է հանգեցնել հանրության համար որևէ վտանգի առաջացման, ընդունվում է այլ ձևի վարչական ակտ*, մինչդեռ՝ ուղենիշային տարբերակում ճիշտ տարբերակն է 1)-ն, այն է՝ *անհրաժեշտություն է առաջանում անհապաղ ընդունելու վարչական ակտ, քանի որ հապաղումը կարող է հանգեցնել հանրության համար որևէ վտանգի առաջացման, ընդունվում է այլ ձևի վարչական ակտ, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:*

Հավակնորդը նշել է, որ նկատի ունենալով, որ անհրաժեշտ է եղել ընտրելու սպառիչ պատասխանը, ապա քննարկվող հարցի դեպքում ճիշտ պատասխան կարող է համարվել օրենսդրությամբ նախատեսված՝ վարչական վարույթում լսումներ չանցկացնելու պարտադիր պայման սահմանող կամ հնարավորություն ընձեռող բոլոր դեպքերը ներառող պատասխանը, որպիսի պատասխան տվյալ դեպքում առկա չէ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ 12-րդ հարցը ձևակերպված է հետևյալ կերպ. «Վարչական լսումներ չեն անցկացվում, եթե /նշել սպառիչ պատասխանը/»:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված են լսումներ չանցկացնելու հիմքերը, մասնավորապես լսումներ չեն անցկացվում, եթե՝

ա) անհրաժեշտություն է առաջանում անհապաղ ընդունելու վարչական ակտ, քանի որ հապաղումը կարող է հանգեցնել հանրության համար որևէ վտանգի առաջացման.

բ) ընդունվում է այլ ձևի վարչական ակտ:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ լսումներ չեն անցկացվում կամ կարող են չանցկացվել **նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:**

Վերոգրյալից հետևում է, որ օրենսդիրը չի սահմանափակվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքերով՝ հնարավորություն տալով լսումներ չանցկացնել նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում, այսինքն՝ սպառիչ պատասխանը համարվում է այն, որն իր մեջ ներառում է վերոնշյալ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված բոլոր հիմքերը: Հակառակ տրամաբանությամբ, կստացվի, որ վերոնշյալ հոդվածի 3-րդ մասով սահմանված հիմքերից բացի այլ հիմք չի կարող կիրառվել:

Այսպիսով, Հանձնաժողովը գտնում է, որ հարց 12-ի վերաբերյալ Հավակնորդի նշած տարբերակը չի կարող համարվել ճիշտ պատասխան:

Հարց 16-րդ

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան նշել է առաջադրվածներից 2)-րդ տարբերակը, այն է՝ *վարչական ակտն ընդունվում է վարչական մարմինների՝ ՀՀ գործադիր իշխանության հանրապետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից*, մինչդեռ՝ ուղենիշային տարբերակում ճիշտ տարբերակն է 4)-ը, այն է՝ *վարչական ակտն ուղղակի կամ անուղղակի իրավական հետևանքներ է առաջացնում այն ընդունած վարչական մարմնի հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձի համար:*

Հավակնորդը նշել է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներից բխում է, որ վարչական ակտը կարող է առաջացնել ոչ միայն ուղղակի, այլև անուղղակի եղանակով կարող է առաջացնել հետևանքներ, հետևաբար, հարցի մեջ բոլոր պատասխանները ճիշտ են:

ՀՀ վճռաբեկ դատարանը մի շարք որոշումներով տվել է վարչական ակտին բնորոշ հատկանիշները՝ ի թիվս այլնի նշելով նաև հետևյալը. վարչական ակտն առաջացնում է *ուղղակի իրավական հետևանքներ* կամ *ուղղված (միտված) է այդ հետևանքների առաջացմանը* վարչական մարմնի հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար, դրանով վարչական մարմինը վերջիններիս համար սահմանում, փոփոխում, վերացնում կամ ճանաչում է իրավունքներ և պարտականություններ, ինչպես նաև նրանց տրամադրում է իրավունքներ կամ ստեղծում է այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման, կամ մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում է նրանց իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն է դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում է նրանց իրավական կամ փաստացի դրությունը:

Վերոգրյալից հետևում է, վարչական ակտն առաջացնում է միայն ուղղակի հետևանքներ, այն չի կարող անուղղակի հետևանքներ առաջացնել, քանի որ հետևանքը պետք է լինի անմիջական, ուղղակի, կամ վարչական ակտը միտված է հետևանքներ առաջացնելուն, այսինքն՝ այն չի առաջացրել հետևանքներ, սակայն կարող է կամ ուղղված է հետևանքներ առաջացնելուն, որը չի կարող մեկնաբանվել որպես անուղղակի հետևանքներ առաջացնելու բնորոշում:

Այսպիսով, Հանձնաժողովը գտնում է, որ հարց 16-ի վերաբերյալ Հավակնորդի նշած տարբերակը չի կարող համարվել ճիշտ պատասխան:

Հարց 34-րդ

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան նշել է առաջադրվածներից 2)-րդ տարբերակը, այն է՝ *վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի հափշտակմամբ վերցնելը*, մինչդեռ՝ ուղենիշային տարբերակում ճիշտ տարբերակն է 3)-ը, այն է՝ *փոգանքը:*

Հավակնորդը նշել է, որ հարցադրումը պարզ չէ, հարցի ընթերցմամբ պարզ է դառնում, որ անհրաժեշտ է ընտրել այն տարբերակը, որը չի կարող կիրառվել ո՛չ որպես հիմնական, ո՛չ որպես լրացուցիչ վարչական տույժ: Նշել է նաև, որ եթե հարցադրման նպատակն է եղել ընտրելու այն տարբերակը, որով տրված տույժի տեսակը չի կարող կիրառվել կամ որպես հիմնական կամ որպես լրացուցիչ, այլ կարող է կիրառվել միայն որպես հիմնական տույժ, ապա հարցը բավարար չափով հասկանալի ձևակերպված չի եղել:

Հանձնաժողովն արձանագրում է, որ հարց 34-րդը ձևակերպված է հետևյալ կերպ. *«Նշված վարչական տույժերից որը չի կարող կիրառվել ինչպես որպես հիմնական, այնպես էլ որպես լրացուցիչ վարչական տույժ»:*

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ *փոգանային միավորը, առարկաները հափշտակմամբ վերցնելը և բռնագրավումը կարող են կիրառվել ինչպես իբրև հիմնական, այնպես էլ իբրև լրացուցիչ վարչական տույժեր. սույն օրենսգրքի 23 հոդվածի առաջին մասում թվարկված մյուս վարչական տույժերը կարող են կիրառվել միայն որպես հիմնական տույժեր:*

Հանձնաժողովը գտնում է, որ նշված հարցի ձևակերպման երկիմաստության և տարընթերցումների պատճառով հնարավոր չէ ընտրել դրա ճիշտ պատասխանը: Մասնավորապես՝ հարցի ձևակերպումը կարող է ընկալվել այնպես, որ անհրաժեշտ է ընտրել այնպիսի վարչական տույժի միջոց, որը չի կարող նշանակվել ո՛չ որպես հիմնական, ո՛չ որպես լրացուցիչ վարչական տույժ: Հարցի այդ ընկալման պարագայում այն չի կարող ունենալ առաջադրված տարբերակներից ճիշտ պատասխան:

Նկատի ունենալով, որ հարցադրման ձևակերպումը հնարավորություն չի տալիս միանշանակ հետևության հանգելու, որ Հավակնորդի կողմից տրված պատասխանը սխալ է, Հանձնաժողովը գտնում է, որ հարց 34-ի համար Գնահատման հանձնաժողովի կողմից նշանակված 0 միավորը պետք է դարձնել 1 միավոր:

Հարց 41-րդ

Նշված հարցի ճիշտ պատասխանը 2)-րդ տարբերակն է, քանի որ այդ տարբերակում արտացոլված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հայցի հիման վրա հարուցված գործով պարզման ենթակա հանգամանքների սպառիչ ցանկը: Իսկ Հավակնորդի նշած 1)-ին տարբերակը սխալ է, քանի որ վարչական դատարանը պետք է պարզի վարչական ակտի առոչնչության՝ ոչ թե բոլոր հիմքերի, այլ միայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով սահմանված հիմքի առկայությունը:

Հետևաբար, Հանձնաժողովը գտնում է, որ հարց 41-ի վերաբերյալ Հավակնորդի նշած տարբերակը չի կարող համարվել ճիշտ պատասխան:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Բողոքարկման հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 7126 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակի՝ Վարչական իրավունք բաժնի 34-րդ հարցի պատասխանը գնահատել 1 միավոր:
2. Մնացած մասով բողոքը մերժել:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Կ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Դ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Ա. ԴԻԼԲԱՐՅԱՆ